ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2019 թվականի նոյեմբերի 26-ի N9-Լ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված «Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով և քննարկելով պրոռեկտոր Արա Երեմյանի հաղորդումը «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանակավարժական համալսարան» հիմնադրամի Բարեվարքության կանոնակարգում լրացումներ կատարելու մասին հարցը՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանակավարժական համալսարան» հիմնադրամի Բարեվարքության կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10.7. կետով.

«10.7. Սահմանված կարգով էթիկայի հանձնաժողովը ձևավորվելուց հետո այդ հանձնաժողովի տարիքով ավագ անդամը եռօրյա ժամկետում գումարում է էթիկայի հանձնաժողովի նիստ՝ էթիկայի հանձնաժողովի նախագահի ընտրություն կատարելու օրակարգով։

Էթիկայի հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին։

Էթիկայի հանձնաժողովի նախագահը ընտրվում է բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ։

Էթիկայի հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում է Էթիկայի հանձնաժողովի նախագահը»։

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ